ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱԼՎՈՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ ТАЛВОРИК

---

«30» Օգոստոսի 2012թ
N 04

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
Պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի 2012 թվականի Օգոստոսի 21-ի թիվ 7 հերթական նիստի որոշումները:

Առդիր 34 թերթ:

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ի.ՔԱՄՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի
ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1. Օրակարգի հաստատումը: | Զեկ՝ | Ի. Թամոյան |
| 2. Տալվորիկ գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցը վարձակալությամբ (վարձույթով) տրամադրելու մասին: | Զեկ՝ | Ի. Թամոյան |
| 3. <<Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 14 նիստի ավագանու որոշմամբ հաստատված 2012 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու>> մասին: | Զեկ՝ | Ի. Թամոյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի Օգոստոսի 21 — թիվ 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Ա. Իսայան | (ստորագրություն) | | |
| | Ի. Վանցյան | (ստորագրություն) | | |
| | Վ. Հարությունյան | (ստորագրություն) | | |

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ռ. Համոյան

2012 թվականի օգոստոսի «21»
գ. Տալվորիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի օգոստոսի 21 — թիվ 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալվորիկ գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցը վարձակալությամբ (վարձույթով) տրամադրել մինչև 2012 թ-ի նոյեմբերի 30-ը հետևյալ վարձավճարով:
   Արմավիրի մարզի Արաքս գյուղի բնակիչ՝ Ավիկ Աբգարյանին տրամադրել ԶԻԼ ՄՄԶ-554 Մ մակնիշի բեռնատար ինքնաթափ մեքենան 100.000 ՀՀ դրամ վարձավճարով:
   Համայնքի սեփականություն հանդիսացող վերոհիշյալ ավտոտրանսպորտային միջոցը տրամադրել գույքի վարձակալման պայմանագրով, և հանձնել ընդունման և հանձնման ակտով 5 օրվա ընթացքում:
2. Վարձակալության հանձնված գույքի կապիտալ և ընթացիկ վերանորոգումը թողնել վարձակալի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | Ա. Իսայան | (ստորագրություն) | | |
| | Ի. Վանցյան | (ստորագրություն) | | |
| | Վ. Հարությունյան | (ստորագրություն) | | |

Քվեարկությամբ անցավ միաձայն 3 (երեք) կողմ դեմ չկա:

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի ժ/պ՝ (ստորագրություն) Ի. Թամոյան

2012 թվականի օգոստոսի «21»

գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի Օգոստոսի 21

թիվ 3-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՄԲ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով .

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1. **2012 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.**

1) Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 600,0 հազ. դրամը տեղափոխել 01/1/1 խտվածից 4212 հոդվածի միջոցներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը :

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Ա. Իսայան | | | |
| | Ի. Վանցյան | | | |
| | Վ. Հարությունյան | | | |

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավարի ժ/պ Ի. Թամոյան

2012 թվականի օգոստոսի «21»
գ. Տալվորիկ